**Արձանագրություն N 2**

***2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (փուբերկուլին) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/28» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«18» «Մայիսի» 2023թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Հ. Արոյան

Հանձնաժողովի անդամներ Ռ. Դոխոյան, Լ. Սարատիկյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Հ. Արոյան)***

Ընդունել ի գիտություն, որ 26.04.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի մայիսի 8-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի մայիսի 10-ին ժամը 11:00-ին: 2023 թվականի մայիսի 11-ին ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | natalipharm.n@mail.ru | 01222567 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Հ. Արոյան)***

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Հ. Արոյան)***

Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատելիս հանձնաժողովը արձանագրել էր մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա էին շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետերի պահանջները գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատումը և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցել էր «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին արձանագրված անճշտությունների մասին՝ մասնավորապես՝ Հրավերով սահմանված Հավելված 1-ում՝ Դիմում-հայտարարությունում նշված չէ հրավերով պահանջվող էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև 1-ին պարբերությունից բացակայում են «իրեն փոխկապակցված անձինք» բառերը և առաջարկել էր արձանագրված անճշտությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել և շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ: Սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են և շտկված տարբերակները ներբեռնվել են էլեկտրոնային աճուրդ համակարգ, որից հետո «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովը գնահատում է բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

***(Հ. Արույան)***

Մասնակցի կողմից առաջարկած գները 10.05.2023թ. կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պանզաբանումների մասին*

***(Հ. Արույան)***

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *6. Ընթացակարգի ամփոփման մասին*

***(Հ. Արույան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակցի կողմից ներկայացված հայտը՝

**Որոշվեց**. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/28» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝

- «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն 8.184.000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

**Որոշվեց.** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին ենթակետի պահանջները «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/28» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Հ. Արոյան

Անդամներ՝ ---------------------- Ռ. Դոխոյան

---------------------- Լ. Սարատիկյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Սարգսյան

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք տուբերկուլինի վերաբերյալ
միջնական գներով

| NN | Ապրանքի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Նախնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ի | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ի | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Տուբերկուլին | 3,000 | 3,720.00 | 11,160,000.00 | 8,184,000 | 0 | 8,184,000 | 2,728.00 | 2,728.00 | 8,184,000 | 0 | 8,184,000 | 2,728.00 | 2,728.00 |